# Տեղական Լուրեր

## 300 ԹԵԿՆԱԾՈՒ 82 ԱԹՈՌԻ ՀԱՄԱՐ

Երէկ կէս գիշերին վերջ գտաւ երեսփոխանութեան թեկնածու ներկայանալու պայմանաժամը։

Խորհրդարանի 82 աթոռներուն համար ներկայացած են 300 թեկնածուներ։

Հալէպի մէջ իսլամ հինգ աթոռներուն համար թեկնածութիւնները դրած են 15 անձեր, իսկ ոչ իսլամ երեք աթոռներուն համար 7 քրիստոնեաներ։

Թեկնածուները այսօրուընէ կը սկսին իրենց աշխատանքներուն։

«Թահրիր Արապիի» ղեկավարներէն Րամզի Ալոճաթի, Ջաֆէր Րիֆաի և Մունիր Ղաննամ քաշեցին իրենց թեկնածութիւնը, քաշուելով ընտրական հրապարակէն։

## Գերշ. Տ. Վահան Արք. Կոստանեան կը խօսի Երեւանի ռատիոկայանէն

Կիրակի գիշեր, ժամը 10։15—10։25 Երեւանի պետական ռատիոկայանէն խօսեցաւ Գերշ. Տ. Վահան Արք. Կոստանեան, բնաբան ունենալով խաղաղութիւնը։

Վահան Սրբազան իր նիւթը զարգացուց «Քրիստոս Խաղաղութիւն բերաւ աշխարհին» խօսքին շուրջ։ Խօսեցաւ Ամենայն Հայոց Հայրապետի անունով, և բազմիցս անդրադարձաւ Վեհափառի համաշխարհային խաղաղութեան մասին գրած կոնդակին։


## Ուշադրութիւն

Ջութակահար Պր. Յովհաննէս Վարդանեան, վերահաստատած ըլլալով իր նուագախումբը, պատրաստ է մասնակցելու հարսանիքներու, նշանտուքներու և այլ ուրախութիւններու։ Նաեւ հայկական, արեւելեան, արաբական ու եւրոպական եղանակներ նուագելու։

Փափաքողները կրնան դիմել իրեն՝ Դամասկոսի ռատիոկայանի Հալէպի բաժնի գրասենեակը, (փոստ-հեռագրի շէնքը) կամ հեռաձայնով թիւ 12000ը պահանջելով։

Ամէն օր, առաւօտեան ժամը 9—1

Կէսօրէ ետք ժամը 5—8

## ԱՐԴՈՒԿԻՉ ՅԱԿՈԲ

Ձեր հագուստները արդուկել տալու համար դիմեցէք արդուկիչ Յակոբի, Մեյտան, Կիլիկեան Մայրանցի մօտ, ուրկէ գոհ պիտի մնաք։ Խիստ չափաւորեալ գիներ։

Արդուկիչ Յակոբի մօտ պիտի գտնէք նաեւ «ՍՈՒՐԻԱ» օրաթերթը։

## Վարձու է սուրճի աղօրիք մը

Վարձու է արդիական շատ գեղեցիկ սուրճի աղօրիք մը իր կազմածներով և խանութով։

Փափաքողները թող դիմեն հեռաձայն թիւ 11951ին։


Հ. Բ. Ը. Մ. Հ. Բ. Ը. Մ.

## Դասախօսութիւն

Կազմակերպուած՝

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց Յանձնախումբին կողմէ

Կը խօսի

Դոկտ. Բերկրուհի Նաճարեան

Նիւթ՝

Ընտանիքին դերը Մանկական Դաստիարակութեան մէջ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 25 Սեպտեմբերի 1953 երեկոյեան ժամը 8—ին Հ. Բ. Ը. Միութեան Տան մէջ, Ազիզիէ։

Մուտքը ազատ

(Շարունակութիւն Ա. էջէն)

ըլլ և կամքին իրագործումը։

Այո, արդէն ամէն տեսակի յաջողութիւններէ աւելի վեր է և ինքնին մեծ երգում մըն է.

Հետեւաբար, ասկից աւելին ըսելու պէտք չունիմ, դուն գիտես կամքիս զօրութիւնը անցեալէն ի վեր, ուր աշխատանք տարած եմ կուսակցական շարքերէն ներս կամ ազատ ասպարէզի մէջ։ Ուստի վստահութիւն կը պահանջեմ ցարդ իմ կատարած աշխատանքներուս հիման վրայ..., որոնք գրաւական են ապագային և յաջողութիւնը Աստուծոյ ձեռքն է։

ԱԼԻ ՍԷՅՏ Ֆ


## ՄԽԻԹԱՐԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

### Հեռաձայն թիւ 13542-Հալէպ

Վարժարանս կը վերաբացուի 5 Հոկտեմբերին։

Արձանագրութիւնները կը սկսին 15 Սեպտեմբերին առաւօտ՝ ժամը 9-12 կէսօրէ վերջ ժամը 4-6։

Կ'ընդունուին ԳԻՇԵՐՕԹԻԿ և ՑՈՐԵԿՕԹԻԿ հայ աշակերտներ։

Վարժարանիս մէջ կ'աւանդուին հայ լեզուի և հայ պատմութեան հետ օտար լեզուներ — Արաբերէն, Ֆրանսերէն և Անգլերէն։

Վարժարանս կու տայ հայ ազգին առնական դաստիարակութիւն և կը կերտէ հայ մարդը բարձր և ազնիւ նկարագրով։

Լաւագոյն միջոցներով կը պատրաստուին աշակերտներ ԱՐԱԲԱԿԱՆ ՍԷՐԹԻՖԻՔԱՅԻ ԵՒ ՊՐԵՎԷԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ։

Երեք տարուան մեր աշակերտներուն պետական քննութիւններուն մէջ ձեռք բերած նախանձելի յաջողութիւնը լաւագոյն ապացոյցն է վարժարանիս ուսումնական բարձր մակարդակին։

Գիշերօթիկներու ընդունելութեան պայմաններուն համար դիմել Վարժարանիս Տնօրէնութեան։

ԾԱՆՕԹ.— Վարժարանս ունի փոխադրութեան համար, ինքնաշարժի կանոնաւոր սպասարկութիւն։

Հասցէ.— Collège Mékhtariste B. P. 951, ALEP Syrie




Հասած են «ԼՈՐԷՆԶ» գերմանական հռչակաւոր ռատիոները, առանց մեքենի՝ 25 ս. ոսկի ամսավճարով ու փոխ՝ 1 տարուայ համար։

ԾԱՆՕԹ.— Գամիշլիի եւ Ճէզիրէի շրջանին համար կը փնտռուին ներկայացուցիչներ։

Դիմել՝ ՍՈՒՐԷՆ ՊԻՇԼԵԱՆ վաճառատուն, Թիլէլ

հեռաձայն 13537, Հալէպ

Ինչպէս նաեւ Ֆօթօ Աւետիսի մօտ, Նոր Գիւղ։




## «ՉԸՎ ԻՆԿ ԳԱՄ» ակռայի դեղը

Իր նոր պարունակութեան «Կլիսէրօ - Լօրաթ Աթօմիզէյի» շնորհիւ յանձնարարելի է մանաւանդ մանուկներուն, ծխողներուն և ամէնուն ակռաներու և լինտերու առողջութեան համար։

## ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

### «ԺՈՂՈՎԱԾՈՒ»

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Թիւ 14

Հասցէ.— Minassian Bedros B P. 1110 Beyrouth


## ՍԱԿԱՐԱՆ

### ԹՂԹԱԴՐԱՄ

| | |
|---|---|
| Տոլար | 355 |
| Սթերլին | 960 |
| Ֆրանսական 1000 Ֆրանք | 900 |
| Զուիցերիական Ֆրանք | 82,00 |
| Պելճիքական Ֆրանք | 6,50 |
| Եգիպտական | 840 |
| Յորդանանեան | 910 |
| Տինար | 950 |
| Թրքական | 65,50 |
| Լիբանանեան | 108,00 |

### ՈՍԿԵԴՐԱՄ

| | |
|---|---|
| Անգլիական | 34,50 |
| Օսմ. Րէշատի | 31,50 |
| Օսմ. Թիւնարի | 27,50 |


## ՀԱՃԻ ՄՈՒՀԱՄՄԷՏ ԷԼ ՖԷԼԼԷՔԻ



ՖԱՔԻՐ—ԱՍՏՂԱԳԷՏ

ՄԱՍՆԱԳԷՏ ՔՆԱՑՆՈՂ ԵՒ ՈԳԵՀԱՐՕ

Բէլլեաէ Թաղրայ, Կարած Խաստատ

Հեռաձայնի թիւ 12271


ՏՊԱՐԱՆ «ՆԱՅԻՐԻ»

ՀՈԳԵՏՈՒՆ - ՀԱԼԷՊ